Աշնան գեղեցկությունը «Հայարտուն » մշակույթի կենտրոնում

HAYARTUN

Նոյեմբերի 22-ին աշունը տեղափոխվել էր Վիրահայոց Թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահ: Տարվա այս գեղեցիկ եղանակը ստեղծել էին երեխաները: Իհարկե, իրենց դաստիարակների և դիզայներ և նախակրթարանի աջակից Ասյա Հարությունյանի հարուստ երևակայության և ձևավորման շնորհիվ:

Դեղին ու կարմիր տերևներով «ծառեր», աշնան պատկերներով գեղեցիկ նկարներ, որ պատրաստել էին մշակույթի կենտրոնի գեղարվեստական ստուդիայի սաները` ուսուցչուհի Թամար Սուլխանիշվիլու օգնությամբ: Եվ տարբեր մրգերին համապատասխան հագուստով զուգված երեխաներ` հայտնի նկարիչ Գիորգի Մանոյանի պատրաստած տարբեր մրգերի գեղեցիկ պատկերներով: Աշնանային թագավորությունը հագեցած էր հպարտորեն շարված առատ մրգերի զմբյուղներով:

1 / 2

Աշնան գեղեցկությունը «Հայարտուն» մշակույթի կենտրոնում

HAYARTUN

[illegible]

2 / 2